ԱՍՏՐԱԽԱՆՈՒ ՀԱՅՔ

ԵՒ ՅԱՒԱԳԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔ.

Աստրախանու Հայոց եկեղեցեաց արձանագրութիւններէն ճիշտ կերևին՝ որ քաղաքիս Հայ ժողովրդեան թիւը ամման վիճակի մէջ չըդտնուիր, այլ ամ ըստ ամէ կրպակասի։ 1877 թուականի ամբողջ շրջանի մէջ ծնած են 135 պսակած են 30, վախճանած են 172, անձինք. պսակածների՝ հարկաւ և ծնածներին թուումը գտանվումեն Աստրախանու մէջ վաճառականութեան գործերով պանդխտացած ազգայինք ևս։

Յաւելք սրտի կտանելիք, որ 1877 թուականի մէջ վախճանածների թուումը 43 անձինք յերկուց սեռից մեռած են լերդացաւով (դիֆթերիտ) և այն էլ պատանեկութեան և երիտասարդական հասակներումը։ Այս խղճալի երիտասարդներից շատերը՝ զուցէ անպսակ կեանքի, կամ թոյլատրվի ինձ ասել, սուտ ամուրիութեան ժանտամահի սխտին ենթարկուած՝ կրպատուասուն իրենց մարմնոյ մէջ այնպիսի կենսամաշ հիւանդութիւն, որը յետոյ անբժշկելի կդառնայ, և երբեմն այդպիսի սխտով վարակուած մտանելով ամուսնութեան կեանքի մէջ և կենակցելով պարկեշտասուն իգական սեռի հետ՝ կձարակեն և նոցա մէջ այնպիսի հիւանդութիւն՝ որ շատերի ամուսնութենից կծնանին մի հիւանդոտ և ճիւաղ սերունդ. այս բաներս թէպէտ երիտասարդաց համար մի քոքը խիստ կերևին, բայց ճշմարտութիւն կայ դոցա մէջ։

Թող ամեն գերդաստան գլխաւորները, ծնողները և խնամակալները մեծ զգուշութեամբ հոգ տանին իրենց հովանաւորութեան և հոգատարութեան տակը գտնված երկուց սեռից մանուկ սերնդոց բարոյական կեանքը ուղղելու, երկիւղի Աստուածպաշտութեան՝ և պատուիրանապահութեան մէջ դաստիարակելու և կրթելու մանկական հասակէն սկսեալ, որ մեր բազմակարօտ ամենասիրելի Հայկեան ազգը զէթ ապագայումը ունենայ լաւ՝ կրթեալ՝ առողջակազմ՝ ողջախոհ և առաքինի անձինք, թող իւրաքանչիւր տան մեծեր և ծնողներ հոգ տանին իրենց ընտանիքը պարզ և անշուայլ կեանքի մէջ պահպանելու, որովհետև այժմեան երիտասարդք իրենց աչքի առաջ ունենալով մեծածախ շուայլոտ կեանքը՝ սարսափում են ամուսնութեան լծոյ տակը մտանելուց, և եթէ մի քանի տարիներ ևս շարունակվին այսպիսի օտարամոլ և շուայլոտ կեանքերը Աստրախանու մէջ՝ հարկաւ մի ծանր հոգեոյ պէտք է ասել Աստուածասահման սուրբ ամուսնութեան խորհրդակատարութեան վերայ։ Այս ասելով չեմ կորոշ բոլորովին արդարացնել և երիտասարդներ, ըստ որում նոքա ևս անպսակ կեանքի մէջ մեծամեծ և տարապարտուց ծախքերի են տանում, և առաւել ողբալին է՝ իրենց մարմնոյ թարմ ուժերը և ցանկալի առողջութիւնը անխոհեմաբար զոհում են անկանոն վայելչութեանց։ Սոցա կհրաւիրեմ ուղղել իրենց թիւր կարծիքը և համեստութեամբ կարդալ զգուշացնող բարոյական գրքոյկները։

ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԲՈՒՆԻԱԹԵԱՆՑ.

Ի 24 Փեբրուարի 1878.

ՅԱՌՈՒԹԻՒՆ.